



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ, (0234) 6-11-20, (0234) 6-11-30; luserat@bk.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2013թվականի N 21-Ն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:**

Ի կատարումն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին՝ որոշում է.

Լուսառատ համայնքի տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա - շինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար.
ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար – 5000 դրամ
բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար
բա/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ
բբ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 25000 դրամ
բգ/ 1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 35000 դրամ
բդ/ 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 50000 դրամ
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 1500 դրամ
դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար – 2500 դրամ
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության համար – 2000 դրամ

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում նաև ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

- նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել – 1500 դրամ

0.3 գործակիցը կիրառված է:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար – 2000 դրամ

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար – 2000 դրամ.

5. Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

ա/ գյուղատնտեսական մթերքների համար - յուրաքանչյուր օրվա համար -100 դրամ՝ 1քմ-ի համար

բ/ Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա տեղական տուրք սահմանել 50000 դրամ.

գ/ Խանութներում, կրպակներում, տեխնիկական հեղուկների վաճառքում թույլտվության համար ընթացիկ տարվա տեղական տուրք սահմանել 10000 դրամ:

գա/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

- հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում - 3000 դրամ

- ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում - 1000 դրամ

6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները (սաունաները), զվարճանքի օբյեկտները ժամը 24⁰⁰ -ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.

- ա/ առևտրի օբյեկտների համար – 25 000 դրամ
- բ/ շահումներով խաղեր կաղնակերպելու համար – 250 000 դրամ
- գ/ բաղնիքների (սաունաների) համար - 200 000 դրամ
- դ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 25 000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քմ – ի տեղական տուրքը սահմանել.

- ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ժավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար – 2000 դրամ
- բ/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ժավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար -2500 դրամ
- գ/ այլ արտաքին գովազդի համար 1500 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 դրամ:

9. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող

- հողերի մրցույթ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար – 500 դրամ
- հողերը օտարելու, աճուրդներ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար – 5000 դրամ
- համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել - 50000 դրամ

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

5. ՄԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ՔԵՇԻՇՅԱՆ ԱՐԱՄՍՅԻՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԳՈՒՄԱՐ



ԴԱՆԻԵԼ ՀԱՎՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ, (0234) 6-11-20, (0234) 6-11-30; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2013թվականի N 22-Ն

**2. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը և առաջարկեց հաստատել այն:

Համայնքի ավագանին ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ մասերի պահանջներով՝ **որոշում է.**

Հավանություն տալ և հաստատել՝ համայնքի ղեկավարի ներկայացրած՝ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը.

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12
2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
1 Համայնքի ղեկավար		205000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
2 Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	135000

3	Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	132000
4	Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	131000
5	Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	105000
6	Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	103000
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ			
7	Համակարգչային օպերատոր	1	80000
8	Խմելու ջրի հսկիչ-հարկահավաք	1	86000
ՏԵԽՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
9	Գյուղապետարանի և մշակույթի տան պահակ-պարտիզյան	1	60000
10	Գյուղապետարանի հավաքարար	1	60000
11	Քարտուղարուհի	1	80000
12	Վարորդ	1	60000

ՄՇԱԿՈՒԹԻ ՏՈՒՆ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6
2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԸ /ՀՀ ԴԲԱՄ/
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
1	Մշակույթի տան տնօրեն	75000
2	Գրադարանավար	60000
3	Երաժշտության մասնագետ	60000
4	Պարուսույց	60000
5	Սպորտ գծով մասնագետ	60000
ՏԵԽՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
6	Մշակույթի տան և գրադարանի հավաքարար	60000

<<ՄԱՆՉՈՒԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

1.1 Աշխատակիցների թվաքանակը՝ 18

1.2 Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ /ՀՀ ԴԲԱՄ/
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ			
1	Մանկապարտեզի տնօրեն	1	125000
2	Մանկապարտեզի հաշվապահ, գործավար	1	70000
3	Մանկապարտեզի դաստիարակ	3	120000
4	Մանկապարտեզի դայակ	3	60000
5	Մանկապարտեզի բուժքույր	1	65000
6	Մանկապարտեզի երաժիշտ	0.75	84000
7	Մանկապարտեզի տնտեսավար	0.5	94000
8	Մանկապարտեզի խոհարար	1	60000
9	Մանկապարտեզի խոհարարի օգնական	1	60000
ՏԵԽՆՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
10	Մանկապարտեզի պահակ	1	60000
11	Մանկապարտեզի լավացքարար	1	60000

1.3 Համայնքի մանկապարտեզի ծնողական գումարի չափը սահմանել – 4000 դրամ

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ՔԵՇԻՇՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

[Handwritten signatures for items 1, 2, and 3]


[Handwritten signature for item 4]

[Handwritten signature for item 6]



[Handwritten signature of the official]

ԴԱՆԻԵԼ ՀԱՎՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ, (0234) 6-11-20, (0234) 6-11-30; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2013թվականի N 23-Ն

ԼՈՒՍԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ 2013 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Թույլատրել գյուղապետին համայնքի 2013 թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Ֆոնդային բյուջեի «Գազաֆիկացիա» 04-3-5-51 գործառնական դասակարգման և տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածից պակասեցնել 3,0 մլն. դրամ, այն հատկացնել՝

- «Լուսառատ ոռոգման ցանցի կառուցում» 04-2-4-52 գործառնական դասակարգման և տնտեսագիտական դասակարգման 5112 հաշվին.

1.2 «Կառավարման մարմնի պահպանում» 01-1-1-52 գործառնական դասակարգման և տնտեսագիտական դասակարգման 5112 հաշվից պակասեցնել 150,0 հազ. դրամ՝ այն ավելացնել.

- նույն «Կառավարման մարմնի պահպանման» 5122 հոդվածին:

Կողմ -6

Դեմ -0

Չեղնապահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՌԱՍՏ

6. ՔԵՇԻՇՅԱՆ



ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ, (0234) 6-11-20, (0234) 6-11-30; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2013թվականի N 24-Ա

**0011 - 0006 , 0010-0001 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010 թ. թիվ 186-Ն հրամանի պահանջներով.

համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Կադաստրային քարտեզագրման ժամանակ 03-049-0011-0006, 03-049-0010-0001 ծածկագրերի տակ հաշվառված բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականություն:
2. Գույքերի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը ենթակա է պետական գրանցման:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ


3. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

5. ՄԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ՔԵՇԻՇՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՀԱՄԱՅՆՔ



ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈՒԲՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ, (0234) 6-11-20, (0234) 6-11-30; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2013թվականի N 25-Ա

**5. ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ՝
ՆԵՐՏՆԵՍԱՅԻՆ ԶՐԱՆՑՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 15 % ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՈՎ:**

Զեկուցողը ներկաներին ծանոթացրեց ներդրումային ծրագրերի նպատակների, երկրորդ կարգի ջրանցքների բաղադրիչի իրականացման պայմանների, վերականգնման ենթակա ջրանքների ընտրության հիմնական չափանիշների և դրանց առաջնահերթության որոշման հետ: Հատուկ ուշադրություն դարձրեց համայնքի կողմից կատարվող՝ շինարարական աշխատանքների, 15 % համաֆինանսավորման անհրաժեշտության հիման վրա: Համայնքի ավագանին հավանություն տվեց ներկայացված ծրագրին և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 23-րդ կետի պահանջներով՝ **որոշում է.**

1. Մասնակցել ներդրումային ծրագրին՝ կատարվող շինարարական աշխատանքներին 15 % համաֆինանսավորման պայմանով:

Կողմ -6

Դեմ -0

Չեղնակալ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

5. ՄԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ՔԵՇԻՇՅԱՆ ԱՐԱՍՍՅՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ



ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ